

جامعة أسمانيا

891.99
7-79

19 NOV 2011



891.99
Դ-79

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ՈՒՂՂԵԼ ԿԱՐԴԱԼՈՒՅ Ա. Ա. Զ

Տպված է	Պետք է լինի
62 44 վերև. 4-րդ տողը	ուս
» 76 վերնազիրը	ահմանաս 5ը
» 129 ներք. 4-րդ տողը	հանդիսա
» 147 վերև. 4-րդ տողը	ձան

23 JUL 2013

51300



9498

39



ԲԱՆԱՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՏՈՆԱԿԱՆ ԱԽՈՐՅԱՆ

Մոռացել ենք մենք հին առորյան,
Կապարի պես ճնշող առորյան՝
Գորշ ու միզամած.

Մեր որերը սաղափ են կարծես,
Յերանգավոր խայտող ու պես-պես՝
Թոշնի թև առած:

Մարջանի պես կարմիր արյունով
Եերկլեց մեր ճամրան հեռավոր
Մինչև հաղթանակ,

Յեվ տիրում ե մեզ նոր առորյան,
Էռւսաճեմ իր վազքով հաղթական,
Տեմպով իր արագ:

Կառուցվում են այսոր ամենուր
Գործարաններ, շենքեր ամբակուռ,
Հզոր բարձրաբերձ.

Հիղբոկայան վար վազքը ջրի
Յենթարկել ե կամքին իր արի՝
Էռւյսով ծանրաբեռ:

Յեվ ամենուր յերկախն ե զնդում,
Հաղթ բետոնից պարիսակ կառուցում,
Զուզում առորյան:

Մեր որերը սաղափ են կարծես,
Յերանգավոր խայտող ու պես-պես,
Դառ ու տոնական:

ՊՈԵՏԻ ՄԱՆՐ

(Հովհաննես Թումանյանին)

Սեղեր և հազել Դերեղը մռայլ,
Ինչպես մի այրի՝ սիրածին կորցրած,
Կապառ ափերում ջրերն անփայլ,
Փախչող մի յերամ՝ վշտից հալածված:

Սարերը Լոռվա՝ ծերեր ալեղարդ,
Յավից կորացած, շուրթերով գողզոջ
Իրար են պատմում, վոր յերգչին զվարք
Այցի յե յեկել սե մահը անկոչ:

Իսկ սարի լանջին Անուշը թախծոտ,
Նոր սուդ ե անում, պոետին վողբում.
Զիւ արձագանքն ել՝ մի մանուկ վախկոտ,
Թուխ աղջկանից լացով ե փախչում:

Ստորոտից-ստորոտ կրկնակի կանչով
Վազում ե լալկան տղան դանդրահեր,
Ու նրան հեռվից արձագանքելով,
Սլանում են շտապ հավքերը բանբեր։
Յերգերն են դրանք մեռած պոետի,
Վոր ճախրում են զվարթ յերկնի կամարին,
Նրանց թեկի վրա փայլով արծաթի
Փայլում ե յերգչի ժպիտը անդին։

1923 թ.

ԼԵՆԻՆԻ ՄԱՆՐ

Տիեզերքի արծաթափայլ մաղերին
Ծածանվում ե սղի քողը բաղմածալ,
Ու թառել ե նրա գունատ շուրթերին
Սևափետուր թախիծը լուռ ու մռայլ։

Նա լսում է շշակների կանչը սուր,
Վոր հեռում են լայն յերախը միշտ բացած...
Ու հաղում ե թնդանոթը ամենուր
Յերկաթաձույլ հաղթ թոքերով մըոտած։

Խոնարհվել են գրոշակները սգավոր
Ու արյունոտ արցունքներով են լալի.
Յերկագնդի հսկա սիրտն ել վիրավոր
Կծկվում ե պաղ սարսուռով թախծալի։

Յեկ բենից մինչեւ բենո սառցապատ
Հաղար սգերթ պողպատակուր բանվորի,
Հեռուներից, անապատից անապատ
Բյուր հրամեցաներ մեծ հանճարին դարերի։

Յեկ յերգումներ շիրմի առաջ հողարույր,
Կովել մինչեւ հաղթանակը վերջնական...
Յերկագունդն ել սեղմ շարքերով ամրակուռ
Կողջ պարուրել խորհուրդներով անսասան։

1924 թ.

ՊՈԵՏԻ ՄՍԱՀԸ

(Հավիաննես Թումտնյանին)

Սեղեր և հագել Դերեղը մռայլ,
Ինչպես մի այրի՝ սիրածին կորցրած,
Կապառ ափերում ջրերն անփայլ,
Փախչող մի յերամ՝ վշտից հալածված:

Սարերը Լոռվա՝ ծերեր ալեղարդ,
Յալից կորացած, շուրթերով գողզոյ
Իրար են պատմում, վոր յերգչին զվարթ
Այցի յե յեկել սե մահը անկոչ:

Իսկ սարի լանջին Սնուշը թախծոտ,
Նոր սուդ ե անում, պոետին վողբում.
Զիլ արձագանքն ել՝ մի մանուկ վախկոտ,
Թուխ աղջկանից լացով ե փախչում:

Ստորոտից-ստորոտ կրկնակի կանչով
Վազում ե լալկան տղան դանդրաներ,
Ու նրան հեռվից արձագանքերով,
Սլանում են շտապ հավքերը բանքեր:

Յերգերն են դրանք մեռած պոետի,
Վոր ճախրում են զվարթ յերկնի կամարին,
Նրանց թեմի վրա փայլով արծաթի
Փայլում ե յերգչի ժպիտը անդին:

1923 թ.

ԼԵՆԻՆԻ ՄՍԱՀԸ

Տիեզերքի արծաթափայլ մազերին
Շածանվում ե սղի քողը բազմածալ,
Ու թառել և նրա դունատ շուրթերին
Սևափետուր թախիծը լուռ ու մռայլ:

Նա լսում ե շչակների կանչը սուր,
Վոր հեռում են լայն յերախը միշտ բացած...
Ու հազում ե թնդանոթը ամենուր
Յերկաթաձույլ հաղթ թոքերով մըոտած:

Խոնարհվել են դրոշակները սպավոր
Ու արյունոտ արցունքներով են լալի.
Յերկրագնդի հսկա սիրտն ել վիրավոր
Կծկվում ե պաղ սարսուռով թախծալի:

Յել բենոից մինչև բենո սառցապատ
Հաղար սղերթ պողպատակուռ բանվորի,
Հեռուներից, անապատից անապատ
Բյուր հրաժեշտներ մեծ Հանճարին դարերի:

Յել յերգումներ շիրմի առաջ հողարույթ,
Կովել մինչև հաղթանակը վերջնական...
Յերկրագունդն ել սեղմ շարքերով ամրակուռ
Վողջ պարուրել խորհուրդներով անսասան:

1924 թ.

ՄԱՎԱԶՈՒՆՅՈՒԹ

Այնտեղ, ուր ժամանակը անզգա
ժամերից տարիներ ե հյուսում,
Այնտեղ, ուր այն հանձարը հսկա
Մի փոքրիկ դազաղում ե հանգչում.
Ամեն որ հաղթանակը ծփան,
Իր սաղափ լայն ծածկոցը ուսին,
Մանում ե դամբարանը անձայն,
Համբուրում ե ճակատը դեղին...

Յեվ շիկնում են այտերը զունատ,
Ու ժպտում են շուրթերը մեղմիկ,
Աչքերն են բացվում նրա անթաբթ,
Լայնանում են բիբերը փոքրիկ:

Թվում ե նա իր ձեռքն ե շարժում,
Աշխարհներ միացնում նա իրար,
Նորանոր նվաճում խոստանում,
Կատակած պայքարում անդադար...

Ու ծփում ե անակը ուժգին,
Յերգում ե հաղթանակը զվարթ,
Դողում ե տիեզերքը անծիր,
Հպատակ այդ յերգին անընդհատ...

Յեվ դալիք ալ դարերը հաղթող,
Անցնելով ըիլ ճամբեն յեթերի,
Կազմում են նրա պահակը պատվա,
Կանգնելով շուրջ բոլոր հանձարի:

1927 թ.

ՅԵՐԿՈՒ ՆԱՅՐ

1.

Մի հին պեյզաժ՝ փոշոտ նկար
Դեն շպրտեց կյանքը վարար:
Մութ յերկնքում դալուկ լուսին,
Ինչպիս արծաթ ականջառող,
Կապույտ հեռվի հսկա ուսին
Վերջալույսը դանդաղ հանգչող:
Ստվերների մի մեծ վոհմակ
Թաղնվել ե խիտ թփերում.
Վոլոր ճամբին մութ, անձրագ
Սիրաը սրտին սեր ե պատմում:
Վարագույրը մթնաշաղի
Անջատել ե նրանց կյանքից,
Յեվ մատնված անմիտ խաղի,
Չանձրանում են նրանք իրար կից...
Շարժում չկա, անդորր ե, լուռ.
Յեվ յերկու մարդ՝ ստվերներ կարծեա.
Սերը անմիտ, սերը իզուր
Են ծավալվող խավարի պես...
Մի հին պեյզաժ՝ փոշոտ նկար
Դեն շպրտեց կյանքը վարար:

2.

Նոր նկար ե կյանքը գծում
Այս փողփողեց բոց ոքերում:

Վառ շողերը ջինջ արևի
 Յատկոտում են զործարանում,
 Մերթ կախվում են փոկի թելն,
 Զարաձճի վոստյուն զործում,
 Մերթ թառում են նրանք շտապ
 Այն պատանու շրթունքներին,
 Դոր չի մնում իսկի պարապ,
 Իշխում հուժկու մերենային...
 Նա ժպտում ե ընկերուհուն,
 Պատմում սերը իր արեստ,
 Անիվներն են նրան թելադրում
 Զընգուն խոսքեր այս առավոտ...
 Զկա այստեղ դունատ լուսին,
 Մվավում են փոկերը հաղթ,
 Իսկ աղջկա նուրբ ուսերին
 Վառ շողերն են խաղում զվարթ...
 Աշխատանքի թափը ուժեղ
 Միացրել ե նրանց իրար,
 Յեղ պայքարի ճամբարն անշեղ
 Միրո տաք շունչ տվել անսպառ
 Նոր նկար ե կյանքը գծում
 Այս փողփողեց բոց որերում:

1928թ.

ԶԱ. Գ. Ե Ս Է Լ

1.

Այնտեղ, վերեռում, լեռների կրծքին,
 Մոտիկ, շատ մատիկ փիրուզ յերկնքին,
 Քուռզետի պահակ՝ Մցխեթն և կանգնած,
 Դարերի փոշին մազին ճերմակած:
 Կծկվում ե նա գլխից մինչև վոտ
 Ու գողում ցրտից ամեն առավոտ,
 Մինչև կծկի արշալույսը ար
 Մեծքին կցի սաղափն մի շալ:
 Այդ շալով շողուն և նկարագարդ
 Պարուրվում ե նա ու նայում անթարթ
 Քուռզետի մեջքին կանգնած հսկային,
 Այն յերիտասարդ, այն նոր պահակին..
 Յեղ պաշտոնագուրկ ծերուկը հողնած
 Իզուր ե ձգտում իջնել գեպի ցած,
 Վոտները քարե ծանր են և անտաշ,
 Խորը արմատված լեռներում անշարժ:
 Իսկ պահակը նոր՝ Զազեսը հսկա
 Հսկում ե ջրին հեռու, մոտակա,
 Յեղ առավոտավա ցողը աղամանդ
 Փայլում ե նրա յերեսին զվարթ:

2.

Ու ամեն զիշեր Մցխեթը ծերուկ
 Բամբասում ե խուլ, փսփսում ծածուկ,
 Մոտիկ աստղերին պատմում նրա մասին
 Ու հետո անզոր նիբհում նրանց կողքին...
 Նախանձով լցված, աստղերը գալուկ,
 Թաղնվում են շտապ յերկնքի ծալքում.

Իսկ շողուն դետի յերեսին, կարծես,
Հրեղեն մի սարչ՝ ձգվել և Զազես.
Նա վստայնն իր, կըակ թելերով,
Դործել և ճարպիկ լուսե մատներով.
Համարձակ ձեռքով սև քողը մթի
Պոկել և դեմքից դարավոր գետի,
Ու այբի գետի պարանոց ու հուն
Զուքել և հակինթ մանյակով փայլուն...
Յել կարծես հաղար ասուպներ անձի
Լողում են դետի յերեսին թեթև:

3.

Իսկ կայանը մեծ դետի մեջտեղից
Մի յերթ և կաղմել, մի յերթ լույսերից...
Ու դողում և ծեր Մցիսեթը անզոր,
Վերեից դիտում այն յերթը հզոր.
Հառաջն և թառել պատերին խարխուլ,
Թախիծն և նստել ուսերին իր ծույլ:
Մենության ընկեր՝ լուսնյակը գունատ
Յերթից վախեցած՝ աշքերով անթարթ
Կողքին կծկվել, դիտում և հեռուն
Ովկիանը հրեղեն ծփան ու յեռուն:
Սկսվել և մի յերթ մեծ, հսկայական,
Շարժում են, քայլում լույսերն անհամար
Փոշոս ուղիով, ճամբեքով վոլոր,
Մինչեւ կվանեն խավարը բոլոր:

1930 թ.

ԳԱ.ՏՍ.ՍԽԵՆ. Ա.ԼԵՐՈՒՄ.ՆԴՐ ԹԼ.ՈՎԵՐԸ

Ночь, улица, фонарь, аптека,
Бессмысленный и тусклый свет,
Живи еще хоть четверть века,
Все будет так, исхода нет...

А. Блок.

Գիշեր, լապտեր, դեղատուն,
Տափակ կտուր, մի կատու...
Զրի կարկաչ և առու,
Մենակ անցորդ, գորշ հեռու:
Հետո յերգը թախծալի՝
Մի հուշ մոտիկ անցյալից...

Գիշեր, լույսեր փողոցում,
Լույսն և մութը սղոցում:
Ավտոների զիլ շառաչ,
Յել խնդության մի կարկաչ:
Քարե աներ բաղմահարկ,
Յել անցորդներ անքանակ:
Կյանքը դարձել և հավետ,
Հերոսության հսկա յերթ:
Յել զիշերը թախծալի
Դառավ յերեկ պանծալի:

1931 թ.

ՀԱՐՎԱԴԱՐԱՐՆ ՍՊՅԱԿԻ

Դիշերը՝ իբ ու ծածկոցը թավիշ
Ուսերին զցած՝ հեռացավ շտապով,
Վորպես մի պարտված ու հոգնած ըմբիշ
Խավաբ կրկեսից փոշոտ ճամբեքով...

Փողոցում շշուկ, ցողաշաղ մայթեր,
Լույսի, սավերի լուռ պահմտոցիկ.
Արնը կարծես վառվել ե, պայթել,
Հրդեհել հեռուն, ամպեր և յերկինք:

Հրդեհը դեմքին, աչքերով փայլուն
Մի աղջիկ և նա, համեստ հազնված.
Նա ժախտ ունի շուրջի անկյունում,
Վորպես առավոտ ցողով թաթախված...

Դեպի գործարան քայլերով արագ
Շտապում և նա և այս առավոտ,
Նա յերակներում տենչ ունի անափ,
Միշտ աշխատելու, գործելու կարու:

Նա հարվածային միք բանվորունի,
Առաջիններից մեկը կլինի,
Արագ շարժումով հմուտ ձեռքերի
Թափ կտա վաղքին հսկա անխվի...

Հսկա անխվին իբ գործարանի՝
Մեծ թափանիվին և մեր նոր կյանքի,
Կառուցման ճամբին նա չի վարանի
Պետք յեղած պահին անցնել պայքարի,

Մի քայլերդ և նա դնդնդում վստահ,
Տեմպ տալով աշխույժ քայլերին անվախ
Յել կրունկների տրոփյունին հաստատ,
Լույսով վողողված մայթերի վրա:

Հրդեհը դեմքին, աչքերով փայլուն,
Մի աղջիկ և նա համեստ հազնված,
Նա ժախտ ունի շուրջի անկյունում,
Վորպես առավոտ ցողով թաթախված:

1933 թ.

2429
39



ՅԵՐԱ
ՀԵՐՈՍՈԽԹԸՆ ՄՍ.ՄԻՒՆ
(Նվեր Զելուսկինցիմերին)

Վորքան հերոս և ծնել
Մեր յերկիրը այս ջահել.
Դե, ինչպես ձեզ չյերգել,
Չելուսկինի մարտիկներ...
Հիմա հեռվում, հյուսիսում,
Ուր քամին և մոնչում,
Ուր ծովեր կան սառցապատ,
Ուր աբեր՝ չծագած՝
Մայր և մտնում ծովից ցած,
Ուր խավարը անարգել
Իր լայն թևերն և փոել,
Կանգնած ե մի աշտաքակ,
Վորպես փայլուն հաղթանակ,
Վոր մշուշում անորոշ
Վեր և պարզել մի դրոշ,
Հերոսության մի նշան,
Մառցագաշում այն դաժան:
Դուք, Արկտիկի հերոսներ,
Մառցե լեռներ ճեղքեցիք,
Մի նոր ուղի բացեցիք,
Վոր նավերը անարգել
Անցնեն ջրի նոր ճամբեն:

Զեր արշավով նվաճող
Մեր հյուսիսը հեռավոր,
Վոր մնում եր անառիկ,
Մեր մեծ յերկրին կապեցիք...
Վորքան հերոս և ծնել
Մեր յերկիրը այս ջահել.
Դե, ինչպես ձեզ չյերգել,
Չելուսկինի մարտիկներ...

1934 թ.

Հանդիպում

... Սկսվեց հանկարծ, շատ հասարակ.
Նա ներս յեկավ քայլով արագ,
Յերբ զարունն եր դուրսը զարթնել,
Յերբ արելի վսոկին կաթել,
Կախ եր ընկել դեմի պատից
Յեկ անձանոթ նըս այտից:

Ճաճանչների վիունջը ուսին
Յեկ արելի հետ միասին
Նա մոտ յեկավ քայլով հաստատ.
Մի զազգյան կար կողքիս աղատ,
Նա աղջիկ եր սովորական,
Խոպոպներով, դեմքով անդամ...

Պարապ դազգյան աշխուժ շարժվեց,
Պոռատակը վազեց, յերգեց,
Հարեվանցի նայեց նա ինձ
Թեք հայացքով, շատ մոտիկից.
Յեկ զարունը թառեց ահա
Իմ դազգյանի փոկի վրա:
Նոր թափ առաջ իմ լայն դազգյանն
Յես նայեցի նորից նըսն,
Ժպիտ ուներ մեղմ ու աաքուկ,

Խոր թագնված շուրթի ծալքում.
Իսկ ճակատին համառ կնճիռ,
Մատներ ուներ ճկուն ու ժիր:

Դազգյաները յերգ են հյուսում,
Յեկ իրար գեմ աշխուժ մըցում,
Իսկ զարունը կարծես զժվել
Բաց փեղկերից ներս ե խուժել,
Յեկ մեր շուրջը սկսել ճարպիկ
Լույս ու ստվերի պահմտոցիկ:

... Սկսվեց այսպես շատ հասարակ
Յերբ արեի շողը բարակ
Կախ եր ընկել դեմի պատին
Յեկ լույս փոել նըս այտին.
Նա աղջիկ եր սովորական,
Խոպոպներով, դեմքով անդամ:

2.

ՍԵՐ

Ինչպես յեղավ, չեմ հիշում,
Թե զարունն եր մեղալոր,
Կամ հայացքդ անսովոր,
Թե ժպիտդ յերեի,
Լի ջերմությամբ արեի,
Ինչպես յեղավ չեմ հիշում:

• Սիրո յերգ եմ յես հյուսում,
Իմ նոր ընկեր քո մասին,
Նվեր քո լայն ուսերին
Յեկ ձեռներիդ քո ուժեղ...
Թափանիլիս հետ և կաեղ
Սիրո յերգ եմ յես հյուսում:

Յես սիրում եմ քեզ այսոր
Քո ճակատդ լայն բացած,
Ճաճանչներով զարդարված,
Հետո հայացքդ պայծառ
Թարթիչներիդ տակ յերկար.
Յես սիրում եմ քեզ այսոր:

Սովորական մի աղջիկ,
Բայց հարուստ եմ, իմ ընկեր,
Յես կըերեմ քեզ նվեր
Հնչուն վոսկին իմ յերդի,
Յեկ արծաթը ծիծաղիս,
Սովորական մի աղջիկ...

Յեկ յերբ գարնան յերեկոն,
Լի բույրերով հասմիկի,
Իմ տան շեմքին կչոքի,
Դուռս ուրախ կրաղիսն,
Կդաս ինձ մոտ ժպտերես,
Ինչպես գարնան յերեկոն:

Մեր յերկրի պես ջահել
Դու կանգնել ես իմ գիմաց,
Թուխ ձեռներդ ինձ պարզած,
Վորոնք գիտեն և դզվանք,
Մեկ ել աշխուժ աշխատանք,
Մեր յերկրի պես ջահել:

Ինչպես յեղավ, չեմ հիշում,
Թե գարունն եր մեղավոր,
Կամ հայացքդ անսովոր,
Թե ժայիտդ յերելի,
Լի չերմությամբ արեի,
Ինչպես յեղավ, չեմ հիշում...

ԱՐԵՍԼՈՒՅՄ ՄԻՄՅՈՆԻՄ

Վորպես խարսյաշ մի հովվուհի,
Հազած վոսկի, հազած նարինջ,
Ներքե իջավ զեղեցկուհին,
Ներքե իջավ արել ջինջ...

Ու լուսածեմ այդ քայլվածքից
Շիկնեց հանկարծ սարը մոտիկ.
Նա քաղաքի քարի մեջքին
Կապեց փայլուն, փայլուն գոտի:
Յեկ յերկինքն և կարծես պայթել,
Քշել մութը սե, արճիճե...
Վորքան շողուն ճառագայթներ
Վոստոսառւմ են չարաճճի:
Մերթ թառում են ծխնելույդին
Յերկնասլաց զործարանի,
Մերթ քաղաքի թիկնեղ ուսին,
Նորակառուց և պատանի...

Իսկ քաղաքում ով և յերգում
Այնպես անուշ արշալույսին,
—Այն մուրճերն են զիլ համերգում
Հաղթ կառուցման մեծ հանդեսին:

Ողում, վորպես մի ճռվողյուն,
Հատու, զնդուն, մեղմ հնչյուններ,
Նոր տան հիմքն են զցում հողում
Յեկ բարձրացնում քարե սյուներ:

Տուֆն ե շիկնում հարվածներից,
Յերբ վարդաղույն մեջքին հանկարծ
Մուրճն ե իջնում թափով վերից,
Նոր յերգ հյուսում, զեռ չերդված...

Դեկավարն ե այս համերգի՝
Կառուցողը ջուտ, ուժեղ,
Վորը քարե հաղթ լարերին
Թելազրում ե կամքն անշեղ:

Յեկ անսովոր այս համերգին
Ուկնդրում ե արել ջինջ,
Այն շիկահեր գեղեցկուհին,
Հազած վոսկի, հազած նարինջ:

1934 թ.

ԽՈՐՀՈՒՄԸՑԻՆ ՎՐԱՍՏԱՆ

Արեի փոշին մազերին ցանած,
Ճակատը բացած հողմերի դիմաց,
Այնտեղ, Քուռ զետի կանաչած ափին
Հասակ ե առել թիկնեղ պատանին:

Տարիներ առաջ քայլերով արի
Անցնելով ճամբան համառ պայքարի,
Բացել ե գեմքը սղավոր զետի,
Պոկելով քողը գարսավոր մթի,
Յեկ գհան ե նախշել զարդարել, ահա,
Անձար լույսերով՝ կայանով հսկա...

Կորամեջք սարի սապատն ե ուղղել,
Կանաչ թավիշե մարգերով զուգել.
Դաշտերում այնուեղ ծփում ե վոսկին,
Յորենն ե հասնում կրկին և կրկին,
Յեկ բերքով հարուստ կարմիր սայլաշար
Չզվում ե ինչպես մի յերամ անծայր.

Թիկնեղ պատանու կամքին հպատակ
Շողին ե սուլում պուրակում զվարթ,
Քաղաք ե հասնում, վնչում ե, տնքում,
Անլիվին, փոկին կերակուր բերում.
Նոր ուժ ե առնում ամեն թափանիվ,
Վաղում են, վաղում փոկերը անթիվ

Յեկ ողն են լցնում ուրախ յերգերով,
Հատու, համաչափ նոր-նոր հանդերով:
Արել դեմքին և կամքով ուժեղ,
Կառուցման ուղին բռնելով անշեղ,
Այնաեղ, Քուռ դետի կանաչած ափին
Հասակ և առել թիկնեղ պատանին:

1935 թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԵՍՆԻՆ

Յես հիշում եմ քո սենյակը դորգազարդ,
Բաղկաթոռը, լուսամփոփը քո փայլուն
Յեկ մազերիդ ձյունը ճերմակ և արծաթ,
Հետո ձայնդ, այնպես անուշ և հնչուն...

Յես հիշում եմ քո հայացքը հեռավոր,
Վոր հյուսված եր ջերմ շողերից արեի,
Շուրթիդ ծալքում քո ժպիտը լուսավոր,
Նա քաղված եր ջինջ յերկնքից յերեի...

Յես մի նորեկ, ջահել պոետ, անվատահ,
Նստած եյի կիսախալար սենյակում,
Ինչպես մի թուփ, կաղնու դիմացը հոկա,
Քեզ, մեծ վարպետ, յես քեզ եյի ունկնդրում:

Պատմում եյիր, իմ ուսուցիչ, քո մասին,
Քաջալերում ինձ քո վճիտ խոսքերով.
Զգում եյի՝ ներկա յեմ մեծ հանդեսին,
Ողն եր լցվել քո յերգերի համերգով:

Ծեր Դեկբեղն եր, կարծես, խշում սենյակում,
Փրփուր թողնում վարագույրին դիմացի,
Յեկ Անուշն եր մեղմիկ ժպտում անկյունում,
Զեռքով կանչում իր սեահեր սիրածին:

Ինչպես ձաղուկ, բունը կորցրած, վիրավոր,
Կծկվել եր թուխ Գիգորը քո կողքին.
Յես քո ուսին տեսա թառած անսովոր
Հեքիաթային քո «Հազարան բլբուլին»:

... Յեվ, յերբ հիմա, յես հյուսում եմ մի նոր յերկ,
Քեզ եմ հիշում և քո մաղերը արծաթ.
Դեռ հնչում եմ իմ ականջին մի համերգ,
Յերբ հիշում եմ քո սենյակը զորդաղարդ...

1935 թ.

ՀԵՐԱԿՈՒՆԻԿ
(Պուկտա Պուկտայանի արձանի մոտ)

Տեսա, հրացանը համարձակ ուսած,
Նման սրբնթաց մի հողմի հսկա,
Քայլում ես ահա զարերի դիմաց,
Լուսաճեմ հետքեր զրանիտի վրա...

Այդպես քայլեցիր և այն սրերին
Թշնամու դիմաց Արգինա ձորով,
Արյունդ ներկեց արեի վոսկին,
Հետո զրադացում հոսեց կարկաչով:

Պարզելով այսոր ծածանվող դրոշ՝
Անցել ես մեղ հետ հաղթական յերթի,
Գրանիտի վրա հատու և վորոշ
Տրոփիյունն ե հնչում քայլող վոտների...

Հպատակ քո վեհ, հզոր հայացքին
Արեն և այսոր յերկնքից իջել,
Ինչպես սիրահար, վսոկիով անզին՝
Համբույրով զուգել ճակատդ ջահել:

Արեի ուսին համարձակ հենված,
Նման սրբնթաց մի հողմի հսկա,
Քայլում ես ահա զարերի դիմաց,
Լուսաճեմ հետքեր զրանիտի վրա...

ՄԵՐ ՇԵՐԱՐԻ ՀԵՐՈՍՈՒՀՈՒՆ

Ճաճանչափայլ մեր յերկրում,
Ուր արեն և հալոցք դառնում,
Դու յես այսոր ազատ քայլում,
Հերոսուհի սեաչյա:

Դառած լեզենդ նոր դարերի,
Դու ջարդում ես այսոր արի
Քսենափոնյան անակների
Գորշ պատերը հնամյա...

Դու անցնում ես նախշուն շորով
Կոլխոզային լայն դաշտերով,
Յողաթաթախ մեր լեռներով,
Ուր նոր կյանքն և կանաչում:

Քո հաղթական յերթիդ դիմաց
Աղբյուր և զետ թևատարած,
Բաղմագարյան հունը թողած,
Նոր ճամրին են կարկաչում:

Արագությամբ շող կայծակի,
Նստած զեկին սավառնակի,
Դու ճեղքում ես ջինջ յերկնքի
Հեռուները վոսկեցող...

Ճամրադ լայն ե, բաց ե հավետ,
Տուֆաքարի հմուտ վարպետ,
Նկարչուհի, ճարտարապետ,
Մեր նոր կյանքը կառուցող:

Դիտեմ, կռվի ժամին դաժան
Քո սիրածիդ հետ անբաժան,
Դու ուսելով փայլուն հրացան,
Կպայքարես անպայման:

Ինչպես այն ժամ քեզ չյերգել,
Քո այդ յերթիդ, աճիդ վայել
Հաղթահասակ բարդի ջահել՝
Հողմերի դեմ անսասան:

Ճաճանչափայլ մեր յերկրում,
Ուր արեն և հալոցք դառնում
Դու յես այսոր ազատ քայլում,
Հերոսուհի սեաչյա:

1935 թ.

ԱՐՅՈՒՆ ՀԱՅԻ ԿԱՊՈՒՏԻՆ

(Շիրվանզարելի նիւթակին)

Չեմ մոռանա մի հանդիպում յես հավետ.
Քարնանային առավոտ եր և արև,
Յողոտ մայթով անցնում եյիր դու, վարպետ,
Հովն եր իւաղում արծաթ բաշիդ հետ թեթև։

Մի պիոներ գեմդ յելալ և ժաղաց,
Զեռքը վերե—կանգնեց պատրաստ բարեի,
Դարն եր կանգնել, մեր նոր դարը քո դիմաց,
Կայտառ դեմքին դարնան ցոլքը արեի։

Բնդունեցիր դու բարեը փոքրիկի,
Խոպոպները մեղմ շոյեցիր և անցար.
Փայլեց մեկ ել քո ակնոցի ապակին,
Վերջին անդամ տեսա մաղերդ արծաթ...

Վաղուց անցած խավար ճամբան «Քառսի»,
Զահելի պես քայլում եյիր, մեծ վարպետ,
Կողքիդ, ահա, ծանոթ տղան ուսուսի...
Չի մոռացվի այս հանդիպումը հավետ։

1935 թ.

ԱՇԽԱՆԱՑԻՆ, ԼԻՐԻԵՍ

1. ԱՅԳՈՒՄ

Խաղողի այգում քայլում ե, անցնում
Շողուն հայացքով իմ թուխ հարսնացուն,
Կողխողի այգում, կանգնած իմ կողքին,
Իր կամքն ե ձուլում բոլորի կամքին...
Խաղող ե քաղում և հետն ել յերգում
Զահել հարսնացուս ջահել յերկում։
Հետո կոացած քթոցում դարսում
Վողկույզ առ վողկույզ խաղողը հասուն,
Ու մեկ ել ձգվում ամբողջ հասակով,
Նայում ինձ ծածուկ թփի արանքով։
Զույգ սև խաղողներ՝ աչքերը փայլուն,
Ծիծաղի մի փունչ շուրթերի ծալքում,
Քամու պես ճկուն իրանով իրա
Մինչեւ յերեկո աշխատում ե նա։
Իսկ յերեկոյան մի ծածկոց մեջքին
Հյուսած արևի շողերից վերջին,
Մոտենում ե ինձ, նայում կաբուով
Յեվ ձեռքս սեղմում հողաբույր ձեռքով...
Մենք տուն ենք դառնում ծանոթ ուղիով,
Խաղողն ե հասնում պատերի այն կողմ։
Հաստատ քայլերով անցնում ե, յերգում
Զահել հարսնացուս ջահել յերկում։

ԻՆՉԱԲԱՆ ԵԱ ՃԱՂԿԵԼ, ՅԵՐԿԻՐ ԻՄ ՋԱհԿԵԼ
ԻՆՉԱԲԱՆ ՔՌ ՄԱՍԻՆ Այսոր ՀԵՐՊԵԼ:

ԱՐԵՆ Կ ԹԱՌԵԼ ՃՊՆԵՐԻԴ ՊԱԼԱՐ,
ՎՈՍԼԻ յԵ ՓՈԵԼ ՃԱՄԲԵՔԻԴ ՃԱՆԱՀ:
ՆՈՐ հՅՈՒԺ Կ ԾՈՒՄ ՄԱՄԵՆ մԻ ԼԱԼԱ,
ՎՈՍԼԻ յԵ հՆՉՈՒՆ ՄԱՄԵՆ մԻ ԿԱՐԿԱՀ:
ՍԱՐԵՐԻ ԼԱՆՃԻՆ ՆՈՐ ՊԱՉՄ Կ, ՆՈՐ ՐԵՐՔ,
ԱՉՈՒՆԸ պԵԽ-ԱՊԱՆ մՐԳԿԵՐ Կ ԲԱՉՄՈՒՄ,
Ա.մԵՆ առավու ՆՈՐ ԽԻՒԴ Կ Ու յԵՐԳ,
Ա.մԵՆ յԵՐԱԿՈՆ ԱՊԳԱՓ Կ ՆԱԽՍՉՈՒՆ:

ԻՆՉԱԲԱՆ ԵԱ ՃԱՂԿԵԼ, ՅԵՐԿԻՐ ԻՄ ՋԱհԿԵԼ
ԻՆՉԱԲԱՆ ՔՌ ՄԱՍԻՆ Այսոր ՀԵՐՊԵԼ:

ԼՈՒՍԻՆԸ ՎԵՐԻց ԿՈՊՈՒՄ Կ ԱՐԾԱԺ
ՄԵՐ ՆՈՐ ՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՐԻ ՎՐԱ,
Ա.ՅՎԻ յԵ ՊԱՐՃԵԼ ՄԱՄԵՆ մԻ ԲԱՑՎԱՏ,
ՇՈՒՐՃՎԱՐ ԵՆ ԿԱՊՄԵԼ ՃԱՌԵՐԸ ահա:
ՅԵՎ գԵՐՔԸ ՄԼՎԱԾ հԱՎԻՆ ՔՌ ՄԱՐԺՄԱՆԴ,
ԳյՈՒՂԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐ ԿՈՒՊՎՈՒՄ ԵՆ, ՎՈԽՎՈՒՄ,
ՀԱԼՎ յԵ ՊԱՌՈՒՄ ՄԱՄԵՆ մԻ ԱՎԱՆ,
ՀԱՐՈՒՄՄ ԵԱ, հԱՐՈՒՄՄ, յԵՐԿԻՐ ԻՄ ՉՈՂՈՒՆ:

ԻՆՉԱԲԱՆ ԵԱ ՃԱՂԿԵԼ, ՅԵՐԿԻՐ ԻՄ ՋԱհԿԵԼ
ԻՆՉԱԲԱՆ ՔՌ ՄԱՍԻՆ Այսոր ՀԵՐՊԵԼ:

1936թ.

ՅԵՐԳ ԵԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԱՒՆ

ԲՈՅ Կ ԱՐԿԵԼ կյանքի բախչում,
ՃԱՃԱՆՃԱՊԱՐԴ ԻՆ կանաչում,
ՄԵՐ յԵՐԿԻՐԸ ՊԱՆՊՐԱԿԵՐ:
ՍԱՊԱՖԱՆԱԽՈՉ ՍԱՊԸ ՃԵՐԻՆ,
ՆԱ ԽՎՈՒՄ Կ ՉՈՂ ԼԱՐԵՐԻՆ,
ՏԱՊԿԵՐ հՅՈՒՍՈՒՄ Ու յԵՐՊԵՐ:

ՀԱՊԱԾ ՊՈՒՄԱՉ, հԱՊԱԾ ԱՄԼԱՍ,
ԲԱՐՃՐԱԳՐԵԼ Կ ՐՅՈՒՐԵՂ ՆԱ ԹԱՍ,
ԼԻ գԻՆԽՈՎ արենի...
Ա.ՊԱՄՊՈՒԺՅԱՆ ՎՈԵԼ ՍԱՎԻՐԱ,
ՄԵՐԳՈՎ սԻՆԻ ՍՈՒՎԻՐԻ ՎՐԱ,
ԻՆՔՆ ԵԼ կանգնել բարենի:

Ա.ՊԱՄՊՈՒԺՅՈՒՆ ՄԱՐՊԱԳԽՈՒՆՈՒՄ,
ՀԱՄԱՅՆԱԼՎԱՆ մԵՐ արտերում,
ՈւՐ ՎՈՍԼԻՆ Կ ցՈՐԵՆԻ.
ՀԱՐՈՒՄՄ այզի, հԱՄՈՒՆ ԲԱԽՉԱ,
ՎՈԽԸ վՈՐ ՆԱԽԽՈՒՆ ճՈԽ ԽԱԼԲԽԱ,
ՎՈՐ վՈՎԵԼ Կ մԵՐ զԵՏՆԻՆ:
ԻԱԼ կԱՊՈՒԳՎՈՂ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ,
ՈւՐ վՈՐԳԻ պԵԽ ՄՈՒԳԻՆ Կ ՃԱՂԿՈՒՄ
ԱՐԿԻ տակ չԵՐՄԱԳԻՆ,
ՅԵՐՊՆ Կ հՆՉՈՒՄ գՆԿՈՒՆ ՍԱՊԻ,

Նման յերգին նորահարսի,
Վոր ջաճել ե, յերջանիկ:
Յերջանկության յերգը շուրթին,
Շող լարերով սաղը ձեռին,
Հաղթանակող, անվեհեր,
Զինարի պես վեր և ձգվել,
Կյանքի բախչում բոյ և քաշել
Մեր յերկիրը դանդրահեր:

1936 թ.

Ա.ՅԵՎԼՈՒԹՅՈՒՆ

Էնկեր Ստալինը այցելեց իր
մոր...
Լրագրերից

Դուռը բացվեց դիմացի,
Շողաց արելը շեմքին,
Մորը յեկավ նա այցի
Արեի հետ միասին:

Փարվեց կրծքին մայրական,
Զեռը սեղմեց կարոտով,
Ժամանակը մի վայրկյան
Պահակ կանգնեց հարգանքով...

Հյուր ե յեկել թանկագին՝
Վորդին մորը հարազատ,
Մայրն ե շոյում ջերմագին
Վորդու քունքերը արծանքով:

Նա յե, նա յե իրեն մոտ,
Հաղթանասակ մի կաղնի,
Կայտառ, ինչպես առավոտ,
Նավալարը մհծ նավի:

Յեկ լայնացած բիրերով
Մայրը նայում ե ահա,
Վոր իր սրտի խորքերում
Պահի պատկերը նըա,

Վորի գործով հաղթական
Վողջ յերկիրն ե կանաչում,
Անգամ քունը մանկական
Այդ վեհ գործով ե շնչում:

Դուռը փակվեց դիմացի,
Շողաց արել շեմքին,
Մորներ յեկել նու այցի,
Արեի հետ միասին:

936 թ.

ԳՈԼՈՐԵՍ ԻՐԱՐԹՈՒԹԻՒՆ

Պատմության վոլոր, լայն ուղիներին
Վորքան կին-մարտիկ արյուն են թափել...
Թշնամու դիմաց նիզակ ե ճոճել
Հին Հունաստանի ամազոնուհին,
Վոր նժույզ նստած, արեի տակ վառ,
Կովել ե այն հին աշխարհի համար:

Մի ուրիշ զինվոր, Ժաննա դ'Արկը քաջ,
Տանը թողնելով ցուպը հովվական,
Զբահի փոխած զգեստը դեղձկական,
Փոշոտ ճամբեքով դիմել ե առաջ...
Բայց Որլեանի կույսը այն համառ
Պարզել ե զրոյը կայսրերի համար:

Այլ հերոս ես դու, քեզ ծնել ե վեհ
Հեղափոխության արգանդը հզոր,
Վոր զարձրել ե քեզ առաջնորդ այսոր,
Քեզ, հանքավորի զուսոր անվեհեր,
Արծաթ մազերով մոլեզին տրիբուն,
Զինջ արևաշող աչքերով փայլուն:

Դու վորդի ունես, այնահեղ, Մոսկվայում,
Կարմիր փողկապով—ուրախ պիոներ,
Իջնում ե զեմքիդ կարոտի ստվեր,
Յերբ արյունահեղ կովի մարզերում
Տեսնում ես մի թուխ հերոս պատանի,
Վոր նման ե քո սեռուկ տղային:

Բայց ել չես տիսում, յերբ հիշում ես դու,
Վոր յերկիրը մեծ մայրն ե նրա նոր,
Վորը իր ձեռքով, պայքարի սովոր,
Գուրգուրում ե ջերմ քո փոքրիկ վորդուն...
Յել դու սիրտ արած, քայլում ես կրկին,
Քո խսպանուհի քույրերի կողքին:

Հնչում ե ուժզին քո ձայնը հստակ,
Յերբ յելնում ես դու ամրիոն վստահ,
Յել խոսքերը քո, շեփորի նման,
Կանչում են, տանում դեպի հաղթանակ...
Հասել ես արդեն, ո, հերոս դու կին,
Գայլք դարերի արևոտ շեմքին:

1937 թ.

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՐՏՅ

(Սերգեյ Կիրովի անմար հիշոտակին)

Յերբ թշնամին դարանամուտ
Կնտակ ուղղեց քո սրտին,
Յել յերեկոն ջինջ ու կապույտ
Աև քող զցեց ճակատին,
Այն ով ասաց, վոր դադարեց
Բարախելուց սիրտը քո մեծ:

Կայաններում ելեկտրական,
Մոտորների պտույտում,
Սավառնորդի սրտում անգամ
Քո վեհ կամքն ե բարախում:

Վասկի հասկը լայն դաշտերի
Քո շնչով ե տաքացած.
Ալ վարդերը պարտեզների
Քո արյունով են ցողված:

Յել ծիծաղում ջահելների
Քո ծիծաղն ե դուրեկան.
Հզոր յերթում բանակների
Քո քայլվածքն ե հաղթական:
Այն ով ասաց, վոր դադարեց
Բարախելուց սիրտը քո մեծ:

1936 թ.

ՄԱՅԻՍՄԵՆԱՅԻՆ ՆԱՄԱԿԻ

Նա իր ջահել սիրածին,
Գրեց այսոր մի նամակ,
Յերբ տանձենին դիմացի
Հագավ ծաղիկ և ճերմակ:

Յերբ նարինջը արեի
Փարվեց ուսին քաղաքի,
Նա խոսք զբեց բարեի
Իր սեահեր սիրածին:

...«Վողջույն, ընկեր հեռավոր,
Արևակեղ ճակատով,
Սահմանապահ իմ զինվոր,
Քեզ եմ զրում կարոտով:

Մասնակցեցի յես շքեղ
Մայիսենիյան մեծ յերթին,
Ուր խնդության հետ մեկտեղ
Քայլում եյի կողք-կողքի:

Ուր ծալքերում դրոշի
Ժիր քամին եր թագնվում,
Ուր արեի ջինջ փոշին
Մեր մազերին եր փայլում:

Քեզ եր, քեզ եր հիշեցնում
Բույրը ծաղկող հասմիկի,
Հոմեւ եր շոյում և անցնում,
Այնպես նման գգվանքիդ:

Ուսած հրացան, ինչպես դու
Քայլում եյի խնդադին,
Սիրաս խփում եր հատու
Քայլերդի հետ միասին...»

Գիտեմ, կռվի մեծ ժամին
Մենք կլինենք անբաժան,
Կանգնած մոտիկ սահմանին,
Մահվան դիմացը դաժան:

Վողջույն, ընկեր հեռավոր,
Արևակեղ ճակատով,
Յես մի համբույր քեզ այսոր
Ուզարկում եմ կարոտով...»

Նա իր ջահել սիրածին
Գրեց այսոր մի նամակ,
Յերբ տանձենին դիմացի
Հագավ ծաղիկ և ճերմակ:

1936 թ.

1.

Ընկավ հայրը՝ քաջ մարտիկ,
Հասավ վորդին անդքանիկ,
Յեղբայրների հետ կըտսեր
ուս բերդիր անառիկ:

2.

Վո վեհ ճամբին վերելքի,
Յերբ ասացին—«Ճի՞ յերդի»,
Վորպես բազե ահավոր
Մահը իշավ քո շեմքին։¹⁾

3.

Ճակատ՝ ուներ անարատ,
Զեռքը՝ սառը մագաղաթ,
Նեղ դագաղում պարփակված,
Տեսա հորս հարազատ։

1936 թ.

ՊՈԽԵԿԻՆԻ ՀԵՏ

(Թարգմանչից—Հեղինողին)

Ամեն անդամ, յերբ շուրթերով իմ պապակ,
Յես ըմպում եմ մարգարտաշար քո թափից
Յեվ թարգմանչի զրչով համեստ, հասարակ,
Յես գառնում եմ հնչյուններիդ մասնակից,
Դու մտնում ես իմ սենյակը համբաքայլ
Ուսիդ զցած մի սև թիկնոց բաղմածալ։

Յես տեսնում եմ արարական դեմքը քո,
Լայն ճակատգ իմաստությամբ ակոսված,
Յես լսում եմ մի հոյակապ յերգեհոն,
Վորով քո վողջ եյությունն ե համակված...
Յեվ բացվում ե մի նոր աշխարհ իմ առաջ՝
Շաղկափթիթ հսկա այգի անձանաչ։

Յես տեսնում եմ շատրվաններ շողշողուն,
Զրահարսներ գետակների հայելում,
Քաջ Ռուսլանին, վոր վնտառում ե սիրուհուն,
Թափառելով հեքիաթային այն հեռվում,
Անդ Գվիդոնը, նստած ժայռոտ ծովափին,
Հսպասում ե ձյունափետուր կարապին։

Յես ստվերախիտ սոճու կանաչ անտառում,
Տեսա թախծոտ քո զառամյալ դայակին.
Ուր Տատյանան քեզ ե վինտոռում, թափառում
Նեղ ու վոլոր սեխն տվող ճամբեքին,

1) Պուշկինին։

Ուր գաշտերում բուքն ե անցել շուրջպարի,
Ծընդում են ուր զանդերը ձիերի:
Քեզ հետ մեկտեղ մտանք քաղաք միգապատ,
Ուր պղնձե քո հեծյալն եր արշավում.
Հրապարակում մի սյունազարդ մեծ պալատ,
Ուր ել չկար քո թշնամին արնախում:
Յել քաղաքում գեռ քեզ համար նոր, անտես,
Ազատության, յերջանկության մեծ հանդես:
Իմ սենյակում յես լսեցի այդ ժամին,
Հմբոստության քո յերգերը հանձարեզ...
Նոր ժպիտ կար արարական քո դեմքին,
Հզոր մի կանչ հնչյուններում քո ահեղ:
Յել յերգերիդ յես բախտավոր մասնակից,
Խմում ելի հնչյուններիդ ճոխ թասից:

1936 թ.

ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Իմ սիրելի, իմ անդին,
Ընկերուհի թանկապին,
Յես կհիշեմ հավիտյան
Ծանր քայլդ հղության,
Յերբ արևին դեմ առ դեմ
Քայլում ես դու ժալապեմ,
Յերբ սրտիդ տակ, քո ներսում,
Մեկը քեզ հետ ե խոսում,
Դեռ անձանոթ, նոր եյակ՝
Կոկոնի մեջ մի հարսնյակ:
Զե վոր սրտիդ տակ, խորքում,
Քո հարազատն ե աճում:
Նրան մեղմիկ դորովով,
Հերսության կըակով,
Սնիր շնչով մայրական,
Վոր քո վորդին ապագա
Դառնա հրաձիդ անվեհեր,
Կամ սավառնորդ աներեր:
Ցողաթաթախ մայթերով,
Կամ անցնելիս փողոցով,
Յերբ դու ըդգուշ ե անձայն,
Ծանր քայլով հղության,
Ուզես անցնել մայթից մայթ,
Հրապարակով մարդաշատ,
Դեմդ ճամբար կը բացեն

Յեկ շատ ձեռնիր կպարզվեն,
Քեզ ողնելու, սիրելիս,
Վոր դու չընկնես քայլելիս:
Քո մեջ աճող քո վորզին,
Հարադատն և բոլորի:
Իմ սիրելի, իմ անդին,
Ընկերուհի թանկադին,
Չեմ մոռանա հավիտյան
Ծանր քայլու մայրության...

1937 թ.

ՄԵՐ ՅԵՐԳԱԾ

(Նվեր Ստալինյան Սահմանադրության)

Այս վեհ որերին ինչպես չյերգել,
Յերբ այսպիս հնչուն յերգ և հորինվել,
Յերգ, վոր պատմության բազմահղ զբքում,
Վոսկի տառերով նա յե փորադրում,
Փորադրում և յերգ՝ մի որենք արի,
Առաջնորդը մեծ հոյակապ դարի,
Որենք՝ յերկրի հենակետը կուռ,
Ինչին յերազեց Արքիմեդն իգուր,
Վորը փնտուելով մի այլ հենակետ,
Փորձում եր շրջել աշխարհը հավետ,
Նոր յերգի նրբին յելեվեցներում
Ժիր մանուկների ծիծաղն և հնչում:
Զահել աղջկա քայլվածքը հաստատ,
Վորը տղամարդուն հավասար, աղատ,
Զմրուխտով պատաժ դաշտերն և հերկում,
Կամ տուփ և տաշում յելնող քաղաքում,
Հանքափորերի մուրճերն են զնդում
Այս մեր նոր յերգի հասու տողերում:
Ամեն հնչյունում դայլայլող յերգի
Յերթն և հաղթական մեր կուռ բանակի,

Անցած դարերի մարգկությունն յերեք
Զեր լսել այսպես հոյակապ համերդ,
Վորը պիտ հնչի սերունդից սերունդ,
Եփ յերջանկությամբ ու սիրով անհուն:
Այս վեհ որերին ինչոյն չյերպել,
Յերբ այսպես հզոր յերդ և հորինվել:

1937 թ.

Ֆ Ա Ա Ս Փ Խ Կ

Յերգ ու տաղեր կլիլալով,
Ճայի նման թվարտալով,
Մի թուխ տղա ծովի միջին
Լող և տալիս շորորալով:

Արծաթ ձկան նա չի զիշի,
Վոր սուզվում եւ խորքը լճի,
Այն կտպուտակ մով ջրերում,
Նա ափերին չի ել գիտչի:

Յերբ ալիքը նրան զերում,
Չոռով քաշում ափն եւ բերում,
Նա շուրթերով իրեն կակաչ
Ինչ անուշ եւ ափին յերգում:

Նա ձկվում եւ տփին կանաք
Ու արեին նայում ճանաչ,
Նայում, ծղտում սև աչքերով,
Շուրջը նրա ջրի շառաչ:

Յերգ ու տաղեր կլիլալով,
Թիթեռի պես թովաալով,
Մի թուխ տղա լայն ծովափին
Ծիծաղում եւ քչքչալով:

1937 թ.

Յերկնի կաղույտում անափ
Մեր նավն ենք զեկում համարձակ։
Գտնում ենք նոր նոր ուղիներ,
Անցնում ենք ովկյան ու լրելեռ։
Յերկինքն առած մեր թևին,
Նվեր ենք բերում յերկրին։

ՈԴԱՑՑՈՒՆԵՐԻ ԾԵՐԳԻՔ

Միշտ վեր, դեպի վեր և առաջ,
Թռչում ենք ճամբով անձանաչ։
Հաղթող ողաչուն վախ չունի
Նման սավառնող թռչունի։

Մեզ հետ համաշափ վերեսում
Սրեն և թռչում անգաղրում,
Լուսինն և փայլում դիշերով,
Շողում արծաթե փեշերով։
Ամպեր, փոթորիկ ու մշուշ,
Պատոսում ենք, անցնում ենք զգուշ։

Ծաղկող մեր յերկիրը ջահել
Մեզ բոց վառելիք և տվել.
Տվածը բենգին չե միայն,
Այլ կամքն և յերկը անսասան։
Տաք սիրտն և խփում մոտոսի,
Նման մեծ սրտին յերկը։

Լուսում ենք ինչպես ներքեսում,
Մեր շող հայրենիքն և յերգում,
Տեսնում ենք աչքեր բյուրավոր,
Վոր մեղ ևն նայում պարծանքով։
Ու մենք ամպերից դեպ ներքեւ
Հղում ենք տաքուկ մի բարեւ

Միշտ վեր, դեպի վեր և առաջ,
Թռչում ենք ճամբով անձանաչ։
Հաղթող ողաչուն վախ չունի,
Նման սավառնող թռչունի։

1937 թ.

Մենք ունենք Ստալինյան վեհ որենք—
Լավագույն մեր մարդկանցը այսոր
Ընտրելու իրավունք մենք ունենք,
Վոր յերկիրը ծաղկի որե ցոր:

Տերն ենք մենք յերջանիկ յերկրի,
Յել հպարտ, և ազատ ենք շնչում,
Տերն ենք մենք առավար դարերի,
Վոր յերգեր կստեղծեն կարկաչուն:

Թե վոր յերդ ենք այսոր մենք հյուսում,
Վոր ուրախ բախտավոր ենք ապրում,
Միլիոններն են այդ յերգը լսում
Հայրենի, հարազատ յերկրում:

1937թ.

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՅԵՐԳԻ

Թե վոր յերդ ենք այսոր մենք հյուսում
Վոր ուրախ բախտավոր ենք ապրում,
Միլիոններն են այդ յերգը լսում
Հայրենի, հարազատ յերկրում:

Թող մեր յերգը հնչի, տարածվի
Ու հասնի վոսկեշող արեին,
Թող սիրով ջերմադին նա փարփի
Հեռավոր սառցապատ բելեսին:

Մենք գիտենք, վոր չկա աշխարհում
Վոչ մի մարդ մեզանից յերջանիկ,
Վոր մեզ մոտ ուրիշ կերպ են փայլում
Յել տատղեր, և լուսին, և յերկինք:

Մենք գիտենք խնամել ու սիրել
Արգավանդ մեր գաշտերը ցողոտ,
Ու անհաս բարձունքներ նվաճել,
Մանկան պես ծիծադել լվաթոք:

Անառաներ, պուրակներ ու սարեր,
Քաղաքներ արևոտ բարձրաբերձ
Այսոր մերն են, և մերն են զետեր,
Վոր փոխել են ընթացքը իրմաց:

Ծովերում, ովկյանում ահավոր
Փոթորկից մենք փախչել չզիտենք,
Պայքարի ճամբերին մենք սովոր,
Չարանենդ թշնամուն կհաղթենք:

ՇՈԹԱ. ՌԱԽԱՄԻՒԱՎԵԼԻ

Յերգիչների մեջ դարերի, անմահների մեջ ջահել,
Սիրո մասին վոչ մի յերդիչ Շոթայի պես չի յերզել:
Քիչ և յեղել այդպես տավիղ, վոր հնչել և դարե-դար,
Ռուսթավելու տավիղի պես քաղցրահնչյուն վոսկելար:
Յերբ մատներով ճկուն, բարակ նաև խփում եր սիմերին,
Գետ ու աղբյուր, շունչը պահած, լսում եյին Շոթային.
Մարալները սարի ծերպից վաղում եյին նրա մոտ,
Նայում փայլուն աչիկներով, վճիտ, ինչպես առավոտ:
Փորսող տալով փաղը եր գալիս, նստում յերգչին դեմ դիմաց,
Ճինչ արևն եր յերկնից իջնում, հնչյուններով արրեցած:
Չյունն եր հալում գաղաթներին, ներքև իջնում շառաչով:
Յեվ ձայնակցում յերգին զնդուն, քաղցրահնչյուն կարկաչով:
Ամպերից վեր հաղթ արծիկը եր իր թոփչը դանդաղում
Յեվ յեթերում թևատարած հնչյուններին ունկնդրում:
Շաղկում եյին նարդիդները, շուշանները բռւրավետ,
Նուրբ իրանով կռանալով, մեղմ որորվում յերգի հետ:
Սիրո մասին մշտադալար անմահ Շոթան եր յերզում,
Անհաղթ ռազմիկ Ալթանդիլի և Թինաթին Թագուհու:
Վազրենավոր Տարիելը արտասվալից ու թախծոտ
Զուր փնտում եր Դարեջանին հեռուներում արևոտ:
Չյունաճակատ իր սիրուհուն նաև փնտում եր որն ի բուն,
Յեղեգներում, թփուտներում, թողած հանդիսա, թողած քուն:
Նա Մերանի իր ճին նստած, սլանում եր սարն ի վեր,
Մինչ կհանդիպեր Ալթանդիլին՝ ընկերոջն անձնվեր:
Հնկերության մասին վսեմ անմահ Շոթան եր յերզում,
Յեվ յերգերից այդ կենսահյութ դաշտ ու այգի յեր ծաղկում:

Նա պատմում եր ժանտ քաջքերի գործի մասին չարանենգ,
Յեվ բողոքի, ատելության հյուսում շանթող հզոր յերգ:
Ալթանդիլի, Տարիելի հաղթանակն եր նա պատմում,
Վեհ քաջության մասին նըանց անմահ Շոթան եր յերզում:
Նա յերզում եր հանդիպումը սիրով այրվող սրտերի,
Յերանելի քաղցրությունը վարդարուրյան համբույրի:
Նա յերզում եր արշալույսը և գարունը մարդկության,
Վոսկեղոծվող արևելքի այդ սոխակը քաղցրաձայն:
Յեվ հնչում են այդ յերգերը մեր սրտերումն ել հիմա,
Հերոսության և քաջության յերգչի տաղերը անմահ:
Բայց թե լիներ, հանկարծ այսպես, կենդանանար մեծ Շոթան,
Եր յերաշած աղատ սերը նա կտեսներ անկաշկանդ,
Նա կտեսներ իր Մեսխեթիան, վոր իր մասին և յերզում:
Յեվ իր սիրած ժողովուրդը, վոր յերջանիկ և ապրում:
Յերգիչների մեջ դարերի, անմահների մեջ ջահել:
Սիրո մասին վոչ մի յերգիչ Շոթայի պես չի յերզել:
Քիչ և յեղել այդպես տավիղ, վոր հնչել և դարե-դար,
Ռուսթավելու տավիղի պես քաղցրահնչյուն վոսկելար:

1937 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՎՈՐԱԿ

Առաջին անգամ յես հանդիպեցի Ալեքսիէ
1905 թվի դեկտեմբերին բոլեմիլեւի կոն-
ֆերանտում Տամմերթու ըսում (Թիւլանդիա)։

Ի. ՍՏԱԼԻՆ

Քուրսը ձմեռ... յեղենիներ,
Կանաչազարդ ու գալար,
Հաղած փափուկ ձյունե շորեր,
Խշխշում են միալար։

Յերգ են հյուսում նրանք կամաց
Ու խոնարհում հարգանքով,
Զե վոր մոտիկ տան մեջ, դիմաց,
Հանդիպում ե անսովոր։

Տան մեջ լույսեր... Տան մեջ ժխոր...
Փսփսուկներ անհամբեր,
Խոսելու յե այստեղ այսոր
Մեծ Անդինը կենսարեր։

Վորը, ահա, համեստ նստած
Այստեղ հեռու անկյունում,
Ընկերներին վողեվորված
Ինչ վոր մի բան ե պատմում։

Լայն ճակատին իմաստության,
Մտքի խոր-խոր ակոսներ,
Բոլ աչքերում պայծառության
Շողուն, անմար կբակներ։

Մոտենում ե նրան հուզված
Յերիտասարդ մի արի,
Սև մազերը դեպ հետ սահրած,
Կանդնում դեմք հանձարի։

Նայում նրան, ձեռքը մեկնում,
Սեղմում ձեռքը թանկաղին,
Յերկու ձեռքի տաքուկ հպում՝
Յերկու սրտի վեհ զաշինք։

Յերկու հանձար դեմ հանդիման՝
Մի հանդիպում անսովոր,
Ողն ե լցվել յերջանկության
Մի սքանչելի համերգով։

Ամբիոն ե յելնում ահա,
Կլոցելով աչքը մեկ,
Զեռքն ե առաջ մեկնում վստահ,
Լենին հանձարն այն վեհ։

Նա բոցաշունչ ճառ ե ասում,
Բացում ճամբեք նորանոր,
Ու պայքարի յերգ ե հյուսում,
Մըտից յեկած թեկբով։

Ծխամորճն ե ծխում կամաց
Յերիտասարդ մի արի,
Ու հանձարին լսում հուզված,
Գծում ճամբեն պայքարի։

Գուրսը ձմեռ... Յեղեկնիներ,
Կանաչազարդ ու գալար,
Հաղած փափուկ ձյունե շորեր,
Խշխշում են միալար։

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀՈՒՆՁԻ ՅԵՐԱԿԱ

Ճեռու սարկըին, մատիկ դաշտերին
Արեք վոսկի փոշի յե ցանել.
Հասուն արտերում գեղին հասկերի,
Քամուց ալեկոծ մի գետ և փովել:
Կոլխոզի արտում, են լայն հովիտում
Ահել և ջահել զործի յեն դիմում:

Զեռները ուժեղ միաձույլ թափով
Գործի յեն անցել դաշտում անսահման.
Հասկեր կտրելով, շարքեր դարսելով
Քայլում և արագ հնձվոր մերենամ...

Կոլխոզի արտում, են լայն հովիտում
Ահել և ջահել զործի յեն դիմում:

Պիռներական մի մեծ կուեկտիվ
Լայն դաշտն և անցել ոգնելու համար,
Ճկուն մատներով հասկերից անթիվ
Խուրձեր կազմելու, դարսելու համար:

Կոլխոզի արտում, են լայն հովիտում
Ահել և ջահել զործի յեն դիմում:

Թուխ, արևակեզ ուրախ գեմքերով
Ռզակ առ ողակ շարժվում են նրանք,
Հունձին մասնակցում հնչուն յերգերով,
Հմուտ շարժումներ, աշխատանք արագ...

Կոլխոզի արտում, են լայն հովիտում
Ահել և ջահել զործի յեն դիմում:

Հեռու դաշտերում, մոտիկ ձորերում
Հնչում ե յերզը պիտներական,
Արել վերից վոսկի յե ցանում
Ժպառում են կապույտ դաշտից անսահման:

Կոլխոզի արտում, են լայն հովիտում
Աճել և ջահել մեծ տոն են տոնում:

1928 թ.

ԱՐԵՎԻ Ս.ՇԽԱՆԱԿԻՔ

Արել փայլուն գողնոց ե կապել—
Ճառագայթներից հյուսած մի գողնոց,
Ուրախ ու զվարժ գործի յե անցել,
Շուրջը փոելով շողեր վոսկեղոծ:
Ամեն առավոտ լուսե ավելով
Մաքրում ե փոշին նա գորշ խավարի,
Յերկնքի կապույտ դաշտից քշելով,
Հոտերը ճերմակ փախչող ամպերի...
Ու հետո ազատ նայում ե նա ցած,
Իր շունչը տաքուկ ուղարկում գետնին,
Ամեն մի բույսին՝ հողում աբթնացած,
Քամուց ոբորվող ամեն մի սեղին:
Արեի տաքուկ շունչը զգալով,
Կակաչն ե բացում շուրջերը կարմիր.
Դաշտերը կանաչ զուգվում են ալով,
Վողջը ծաղկում ե, փթթում ե չորս դին:
Իսկ գործից հետո արել զվարժ
Զգլում ե հոգնած սարի լայն մեջքին,
Լուսե աչքելով նայում ե անթարթ
Իր լայնածավալ մեծ աշխատանքին,—
Մեղմիկ ծփացող վոսկե հասկերին,
Ծառերին կանաչ՝ ծածկոցներ հագած,
Յեկ մարզագետնի թավշյա գորգերին,
Վոր վիրուզ գետի ափին են փոված:

1928 թ.

I

Բացած վոսկե թեր,
Ժպտում ե արեր,
Ժպտում ե փիրուղ յերկնքից...
Բայց մերկ են դաշտերը,
Հնձել են արտերը,
Խուրձեր են կապել հասկերից:

Դաշտում նոր հանգես ե՝
Կալսում են մեծ դեղը —
Կալսում ե հսկա մեքենան.
Տրակտորը փընչում ե,
Կալսիչը արնքում ե,
Յերախն ե բացել նա իբ լայն:

II

Դողում ե գետինը,
Շարժվում ե անիվը,
Դարմանը մի կողմն ե դիղում.
Հսկա ատամները,
Շամում են հասկերը,
Յոքենը հասկից բաժանում:

Փոկերը վաղում են,
Խուրձերը թռչում են,
Թռչում են յերախը հսկա...
Յոքենը թափվում ե,
Պարկերը լցվում են,
Ու մեկ ել—են դեղը չկա...

III

Անցնում ե կեսորը,
Քայլում ե տրակտորը,
Դարսվում են գեղերը շաբք-շաբք:
Ուժեղ անիվները
Յել սուր ատամները
Դաշտեր են հնձում շատ արագ...

Ու մերկ են դաշտերը,
Բայց լիքն են պարկերը՝
Պարկերը վոսկե ցորենով:
Բացած փայլուն թեր,
Ժպտում ե արեր,
Անցնում ե փիրուղ յերկնքով:

1929 թ.

ՍԱՅՐԵԿ

Մի արև վառվեց այսոք իմ՝ սրտում
Մայրիկիս տեսա նկաբած թերթում...
Ժպտում ենա ինձ իր ծանոթ գեմբով
Թերթի եջերից նայում անվրդով...
Յես թերթն եմ կարդում կրկին և կրկին
Մայրիկիս մասին, պայքարի մասին,
Թե պլանը նա գերակատարեց,
Գործարանն իր ճեղքվածքից հանեց,
Յեզ համառ ջանքեր և հերոսություն,
Յեզ կնոջ մասին մի նոր պատմություն...
Յերբ նա առուն կդա այս յերեկոյան,
Յես կհանդիպեմ զգեստով տանական,
Կարմիք շողշողուն իմ նոր փողկապով,
Պիռներական զվարթ վողջույնով.
Յես կասեմ, — «Այսոք տոն ե ինձ համար,
— Պատրաստ եմ ձուլվել պայքարիդ համառ,
— Պատրաստ եմ քայլել քեզ հետ կողք-կողքի».
Թող ժպտա մեղմիկ գեմքը մայրիկի:
Գգվանքով ուբախ նա ինձ կշոյի
Պայքարի սովոր ձեռքով իր արի:
Մի արև վառվեց այսոք իմ սրտում,
Մայրիկիս տեսա նկաբած թերթում:

1933 թ.

ԱՍՏՈՒՅ

Վերադարձավ դպրոցից
Փոքրիկ կիմիկը այսոք,
Հնչուն ծիծաղը նորից
Բոնեց սենյակը բոլոր...
Խոպոպկները միշտ ցըիվ,
Թաթիկները թանաքոտ,
Ու նոր մտքեր անհաշիվ
Բերեց նա այս առավոտ:
Փոքրիկ ճակատը կնճռեց,
Սուսիկ նստեց անկյունում,
Յեզ տաշեղից ըսկսեց
Մի ինչ-վոր նոր կառուցում:
Ու յերգում ե նա զվարթ,
Մուրճն ե նրան ձայնակցում,
Շարժումները վարժ, անվախ,
Կառուցում ե, կառուցում...
Մուրճն ե զնկում անընդհատ,
Թաթիկներն են աշխատում,
Այսոք փոքրիկ կոմբինատ
Կըկառուցվի անկյունում:

1934 թ.

ԶԱՐՍՃՃԻ ԴԱՐՈՒՆԸ

Այն սկ ե, սկ հեռվում,
Դաշտում, ձորում, անտառում
Այնպես հնչուն ծիծաղում:

Թռչում թեթև վոստյունով,
Անցնում առվի վրայով,
Յերգով, խինդով ու ծափով:

Գալիս մտնում մեր այգին,
Նստում դեմի կտուրին,
Կանաչ շորերը հազին:

Գրկած փնջով ծիլ ծաղիկ,
Նա ժպտում ե անուշիկ,
Չարաճճի մի մանկիկ:

Մեկ ել թողած բակ, այգի,
Փեղին ե բացում սենյակի,
Յեկ ներս ցատկում հատակին:

Կանգնում պատբաստ բարեի,
Հետո անցնում շուքարի,
Շողերի հետ աբեի:

Այդ սկ ե, սկ սենյակում,
Այզպես հնչուն ծիծաղում,
Յերգում, պարում, թռչկոտում:

Այդ նա յե, նա, միշտ ճարպիկ,
Այդ դաբունն ե սիրունիկ՝
Չարաճճի մի մանկիկ:

1934 թ.

ԻՄ ՄԱՅԾԻԿԻ ՈԴԱՉՈՒ

Իմ մայրիկիս պես մայրիկ,
Դիտեմ, իսկի չի լինի,
Հազին կաշվն վերարկու,
Մեջքին գոտի յե կապում:

Իմ մայրիկը—ողաչու
Ամպերից վեր ե թռչում,
Նա նստում ե սալառնակ,
Ղեկն ե վարում համարձակ,

Կապույտ ողն ե նա ճեղքում,
Զինջ արեին մոտենում,
Ինչպես թռչուն անսովոր,
Իր լայն բացած թերով:

Յերբ ճախրելուց շատ հոգնած
Դանդաղ իջնում ե նա ցած,
Կանաչ դաշտում յես կրկին
Հանդիպում եմ մայրիկին:

Սալառնակի մոտ կանդնած
Ղեկն եմ շոյում յես կամաց,
Հետո փարվում կարոտով
Իմ մայրիկի թռւխ վզով...

Իմ մայրիկիս պես մայրիկ,
Դիտեմ, իսկի չի լինի,
Ամպերից վեր ե թռչում
Իմ մայրիկը—ողաչու...

1935 թ.

ԴԱՅԱՐՈՒՆ

Գարնւն ե, զարնւն ե,
Ծառերն են ծաղկել.
Գարնանը, զարնանը,
Նախշուն են հագել:

Կանչում, կարկաչում ե
Ամեն մի առվակ,
Դաշտում կանաչում են
Ծիլերը բարակ:

Ահա ճռվողում ե
Թռչնակն ուրախ,
Ոդում նա լողում ե,
Ճախրում ե անվախ:

Գետի մեջ շողում ե
Արեք փայլուն,
Վերից նա նայում ե
Ջրի հայելուն:

Եայում ե, շոյում ե
Ափերը կանաչ,
Ուր հովը վազում ե
Ճամբովը ճանաչ:

Գարնւն ե, զարնւն ե,
Ծառերն են ծաղկել.
Գարնանը, զարնանը
Նախշուն են հագել:

1935թ.

ՀԱՅՐԻԿԻ ՅԵՎ. ԳՐԱՇԵ ՄՍԱՄԻՆ

(Մայիսյան ապաստբուրյան 15—ամյակի առիվ)
Մարտն հիշում ե որերը դաժան...
Փոքրիկ եր Մարտն, մոր հետ անբաժան,
Ալլում եր Մարտն ցածլիկ տնակում,
Խաղում եր Մարտն իրմաց նեղ բակում:
Տասնհինգ տարի հաղիվ ե անցել,
Բայց նա հայրիկին զեռ չի մոռացել.
Փոքրիկ եր Մարտն, հինգ—վեց տարեկան,
Հայրիկը յեկալ տուն յերեկոյան,
Նա մայրիկի հետ խոսեց և պատմեց,
Մաման զիշերը իսկի չը քնից.
Շշուկ եր լավում ցածլիկ տնակում,
Մայրիկը ինչ-վոր մի բան եր կարում:
Մինչև առավոտ ճրագն եր անմար,
Նա զրոշակ կարեց հայրիկի համար,
Կարմիր զրոշակը հայրիկն ուսեց
Յեկ հետո արագ փողոցակ քայլեց...
Հետո հեռվում յերեվաց մեկ ել—
Ել նա հայրիկին չտեսակ յերեք...
Կովի յեր յեկել թշնամու զիմաց,
Մայրիսին ընկալ նա զրոշը պարզած...
Տասնհինգ տարի հաղիվ ե անցել,
Բայց նա հայրիկին զեռ չի մոռացել.
Փոքրիկ եր Մարտն հինգ—վեց տարեկան,
Մարտն հիշում ե որերը դաժան:

1935թ.

ՀՈՒՏԵՎԹԵՐՑԱՆ. ԵԵՐԳ.

Շող որերին հոկտեմբերի,
Յես մի փաքըիկ հոկտեմբերիկ
Պատվի կանգնած առնին վայել՝
Մեր յերկրի դիմաց ջաճել,
Տեսա ինչպես աարի լանջին,
Հեռվից տալով մուզ կանաչին,
Նոր ծառեր են աճել, ծաղկել,
Անտառներում շուրջպար կապմել:
Համայնական մեր զաշտերում
Յեկ խաղողի այլիներում,
Ուր քամին և ուրախ վազում,
Տեսա առատ բերքը հասուն:
Հիդրոկայան տեսա ահա,
Վոր սանձել և գետը հսկա,
Յեկ գիշերը դարձրած ցերեկ,
Լույս և սփռել ամենուրեք:
Արեներ և վառել զյուղում,
Ճամբաներին և քաղաքում:
Յես քաղաքում տեսա շենքեր,
Վեր սլացող մեծ հսկաներ.
Տուքն և ժպտում քաղաքներում
Շքեղ գույնով իր վարդագույն:
Մի անսովոր նոր կառուցում
Տեսա ծաղկող մեր յերկրում:
Յես մի փոքրիկ հոկտեմբերիկ,
Յերգ հյուսեցի հոկտեմբերին:

1935 թ.

ՓՈՐՉԻՆ ԼՈՎՈՐԻ

Կեսոր և արդեն... դետն և քչքչում,
Առաջ և վազում կոհակ առ կոհակ,
Կանաչ ափերին դիպչում և, փախչում,
Խոտերում թողած փրփուրը ճերմակ:

Վճիտ գետակում, ինչպես մի ձկնիկ,
Կարենն և լողում, սուզվում և կամաց,
Զրերն և ճեղքում ճեռներով փոքրիկ
Ու հետո մեջքին շուռ զալիս հանկարծ...

Կարենը հաղթող լողորդ և այսոր՝
Նա հեռու թողեց իր ընկերներին,
Յեկ առաջ անցավ շաբժումով սովոր,
Փայլուն ցնցուղներ զանգուր մազերին:

Արեն և միայն նրա հետ մրցում,
Նրան հավասար լողում կողք-կողքի,
Վճիտ ջրերում շողում և, անցնում
Կարենի կողքով արեր վոսկի...

Կարենն և լողում... դետն և քչքչում,
Առաջ և վազում կոհակ առ կոհակ,
Կանաչ ափերին դիպչում և, փախչում,
Խոտերում թողած փրփուրը ճերմակ:

1936 թ.

ՍԱՀԱՐԱՆԱՊԱՀԸ

Յես զանգրահեր յեղբայր ունեմ,
Նա զինվոր և բանակում,
Գիշերները միշտ արթուն ե,
Նա սահմաներն ե հսկում:

Հինդիքեանի աստղ ե կրում
Մոխրագույն իր զլխարկին,
Յել հրացանը սուր սվինով
Շողշողում ե նրա ուսին:

Յերբ կծաղկի այս զարունքին
Սալորենին զիմացի,
Գիտեմ, մեր տուն կտա կըկին
Իմ թուխ յեղբայրը այցի:

Ճամբի փոշին—կոշիկներին,
Դեմքին ժպիտ և արկ,
Յես կփարվեմ նրա կըծքին,
Կտամ վողջույն և բարկ:

Թռչկոտալով նրա առաջ,
Յես իմ մասին կպատմեմ,
Նա մի զինվոր արի ու քաջ,
Իսկ յես՝ փոքրիկ աշակերտ

1936 թ.

Ա. Ա. ԶԵՐԵԿ

Մանուկը — Գարնան վտակ, վաղող ջրիկ՝
Յնցուղների փայլուն փնջիկ,
Արագանոս և համարձակ,
Այդ վնրտեղից այդպես արագ:

Վտակը — Հեռուներից, բարձր սարից,
Սարի ձյունե քուրքի տակից,
Ինձ արել տաքացնելով
Աշխարհ հանեց փաղաքշելով:

Մանուկը — Պատմիր, ինչպես անցար ջրիկ
Նոր ճամբեքով վոլոր ու ձիզ,
Ի՞նչպես եյիր ճամբա հարթում
Այն շողացող հեռուներում:

Վտակը — Հբամեշտ տալով ծանոթ սարին,
Յես արեի հետ միասին,
Յերդ ասելով, խոխոջալով,
Առաջ անցա սարի լանջով:
Թե վոր ճամբիս քար եր ընկած,
Նրան խոկույն զիրկս առած,
Դիմում եյի թափով առաջ,
Ուղիներով նոր անձանաչ:
Թե վոր ավագ լիներ ճամբիս,
Խառնում եյի այն ել ջրիս,
Զուբս պղառը կոհակ-կոհակ,
Ինքս ձզված մի ոճ բարակ:

Մանուկը — Լուսապայծառ և արևոտ
Գարնանային այս առավոտ
Դեպի ուր ևս խոսուն վտակ
Հիմա հոսում այդպես արագ:

Վատկը — Դեպ դաշտերը համայնական,
Վոր յեռում են գարնան նման,
Թող ջրերս կոհակ-կոհակ
Ծիլեր ջրեն շատ, անքանակ:
Վոր դաշտերը բերքով առատ
Ծփան ջրիս պես հորդառատ,
Վոր դու ուրախ լինես, վոքրիկ,
Վոր ինձ նման խայտաս մանկիկ:
Յես մի վտակ՝ վազող ջրիկ,
Յնցուղների փայլուն փնջիկ:

1936 թ.

ՍԵՐԱԿԻՆ

Մոտիկ անցյալում մի մեծ քաղաքում,
Քարաշեն մի տան խոնավ նկուղում,
Ուր չեր թափանցում արեկի վոսկին,
Ուր հյուր չեր գալիս զարունն իսկի,
Իր հիվանդ մօր հետ ապրում եր Սերվին,
Վոտքերով բորիկ վոքրիկ քրդուհին:
Ուլունքի շարան բարակ թուխ վզին,
Սակափ կոճակներ բաճկոնի կրծքին:
Նա աչքեր ուներ՝ զույգ սև սալորիկ,
Գունատ այտերին յերկու խոր վոսիկ:
Նա քիչ եր ժպտում տխուր ժպիտով,
Բլնձի նման իր ատամներով:
Ժամանակ չուներ, վաբ խաղար բակում,
Պիտի աշխատեր Սերվին անդադրում,
Պիտի ծառայեր վոքրիկ քրդուհին
Վերեկի հարկում ապրող հարուստին.
Սենյակներ մաքրեր, աման լվանար,
Արեածագից մինչ գիշերը դար.
Կամ հազիկ զրկած մեծ աղքի կողով,
Ներքե իջեցներ քարե սանդուխքով:
Ու այս բոլորի վոխարեն սուղ վաբձ
Մի քանի կտոր չորացած սև հաց,
Պղնձե փողի մի վոքրիկ զումար,
Վոր գեղեր զներ մայրիկի համար:
Նա քիչ եր ժպտում տխուր ժպիտով,
Բնձի նման իր ատամներով:

Յել ոքեր անցան... Այն մեծ քաղաքում,
 Ուր հիվանդ մոր հետ Սերվին եր ապրում,
 Նոր կյանքի կարմիր գըռշ ծածանվեց,
 Նոր մարդիկ յեկան և արև ծագեց:
 Դարունը յեկավ բույրով հասմիկի,
 Կանգնեց Սերվին նկուղի շնորին:
 Բընձի նման իր ատամներով
 Ժպտում եր Սերվին ուրախ ժպիտով.
 Վերև չեր վազում քարե սանդուխը ով,
 Վոր հաց վաստակեր փոքրիկ ձեռներով:
 Քշեցին այն չար հալուստին վերից,
 Ազատվեց Սերվին կողովի բեռից:
 Մայրին ել առողջ, ել դեղ չեր խմում:
 Աշխատում եր նա մեծ զործարանում:
 Դազոյահի առաջ աշխույժ ձեռներով
 Կտոր եթ հինում հմուտ շարժումով:
 Դպրոց եր վազում Սերվին ամեն որ,
 Վոտքերին մի նոր կոշիկ ճտկավոր,
 Զնզոնդան ուլունք Սերվին կրծքին,
 Դանդուր մաղերին աբեկի վոսկին:
 Կարմիր այտերին յերկու խոր փոսիկ,
 Աշքերն ել վայլուն զույգ սև սալորիկ:
 Յեվ ապրեց այդպես նա մեծ քաղաքում,
 Ուր կյանքն եր ժպտում փոքրիկ քրդու-
 հուն:
 Սենյակ նա ուներ նոր ու լուսավոր,
 Վողողված գարնան, հասմիկի բույրով:
 Յեվ ատամներով բընձեշաբան
 Ժպտում եր Սերվին նոր կյանքի նման:

